ԳՈՐԾ ԹԻՎ ԵԱՔԴ 5018/02/16

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«13» հուլիսի 2017թ. քաղ. Երևան

ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների
ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը
Նախագահությամբ՝ դատավոր Զ.Նախշքարյանի
քարտուղարությամբ՝ Մ.Սամսոնյանի
մասնակցությամբ՝
հայցվոր Սասուն Գասպարյանի
(հաշվառված՝ Կոտայքի մարզ, գ. Զրվեժ, 5 փող., 56տ., անձնագիր՝ AN0759294)

պատասխանող Արտակ Խաչատրյանի
(հասցեն՝ ք. Արտաշատ, Երևանյան 7 շ., 33 բն.)
պատասխանող Արտակ Խաչատրյանի
ներկայացուցիչ Արմեն Մուխսիկարոյանի
(փաստաբանական գործունեության արտոնագիր՝ թիվ 1233, լիազորագիր՝ տրված 28.02.2017թ., երեք տարի ժամկետով)

պատասխանող Աշոտ Համբարձումյանի
(հասցեն՝ ք. Երևան, Ավետիսյան փող., 70շ., 7 բն.)

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Սասուն Գառնիկի Գասպարյանի ընդդեմ Աշոտ Յուրիկի Համբարձումյանի, Արտակ Վլադիկի Խաչատրյանի՝ ավտոմեքենայի տարաժամկետ առուծախի պայմանագիրն անվավեր ճանաչելու և մեքենան հետ վերադարձնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

I

1. Դատավարական նախապատմությունը
Սասուն Գասպարյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Աշոտ Յուրիկի Համբարձումյանի, Արտակ Վլադիկի Խաչատրյանի՝ ավտոմեքենայի տարաժամկետ առուծախի պայմանագիրն անվավեր ճանաչելու և մեքենան հետ վերադարձնելու պահանջների մասին:
Դատարանի 12.12.2016 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92 հոդվածի 1-ին մասի 1-ին մասի 1-ին և 5-րդ կետերի դրույթներին համաձայն՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով հայցվորին թույլ տրված խախտումները վերացնելու և եռօրյա ժամկետում այն կրկին ներկայացնելու համար:
Հայցվորը, ստանալով հայցադիմումը վերադարձնելու որոշումը, եռօրյա ժամկետում վերացնելով դրանում առկա թերությունները, այն կրկին է ներկայացրել:
29.12.2016 թվականին հայցադիմումն ընդունվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Զ.Նախշքարյան) վարույթ:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22.2 գլխի կանոնների համաձայն գործը նախապատրաստվել է դատաքննության:
Հայցվորը միջնորդել է ձեռնարկել հայցի ապահովման միջոց, որը դատարանի 29.12.2016թ. որոշմամբ բավարարվել է:
Պատասխանող Աշոտ Յուրիի Համբարձումյանը և Արտակ Խաչատրյանը հայցադիմումի պատասխան են ներկայացել:
Դատարանը 28.02.2017 թվականի մասնակի վերացրել է դատարանի 29.12.2016 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները:
Դատարանն իր նախաձեռնությամբ 03.07.2017 թվականի որոշմամբ կիրառել է հայցի ապահովման միջոց:
Հակընդդեմ հայց չի հարուցվել:

2. Հայցվորի դիրքորոշումը
Հայցվորը, հայցադիմումով հայտնել է, որ 18.02.2016 թվականին կնքվել է ավտոմեքենայի տարաժամկետումով

առուվաճառքի պայմանագիր պատասխանող Արտակ Խաչատրյանի հետ, ըստ որի նա պայմանագրի օրը ստանում է 74 250 ՀՀ դրամ գումար, իսկ հետագայում, ամեն ամիս, մինչև 2016թ. հոկտեմբերի 05-ը պարտավորվում է մաս-մաս վճարել մեքենայի գնի մնացածը: Մեքենայի գինն է ըստ պայմանագրի՝ 990 000 (ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ: Պայմանագիրը կնքվել և հաստատվել է նոտարական կարգով: Գնորդ պատասխանողը մինչ օրս, բացի սկզբնական վճարած 74 250 ՀՀ դրամից, այլ գումար չի վճարել, ավելին, մեքենան վաճառել է պատասխանող Աշոտ Համբարձումյանին, որի մոտ էլ այժմ այն գտնվում է: Վերջինս ևս չի ցանկանում ոչ վճարել, ոչ էլ վերադարձնել հայցվորի մեքենան: Հայցվորը նշել է, որ մեքենան իբր վաճառել է, բայց գումար դրա դիմաց չի ստացել:
Հայցվորը վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 502-րդ հոդվածը:
Վերոգրյալի հիման վրա, դատարանին խնդրել է 18.02.2016թ. իր և Արտակ Խաչատրյանի միջև կնքված ավտոմեքենայի տարաժամկետ առուծախի պայմանագիրն անվավեր ճանաչել և իր «ԲՄՎ 525 i» մակնիշի 1990 թվականի արտադրության 60BC73284, շարժիչ՝ թիվ 256 256K122026898, նույնացման համարը՝ WBAHC11060BC73284 ավտոմեքենան հետ վերադարձնել:
Հայցվորը դատաքննության ընթացքում պնդեց պահանջը, հայտնեց, որ իրենց գումար չի տրվել, պատասխանողներն իրեն չեն զանգահարել: Խնդրեց հայցը բավարարել:

3.Պատասխանող Աշոտ Յուրիի Համբարձումյանի դիրքորոշումը
Պատասխանող Աշոտ Յուրիի Համբարձումյանը հայցադիմումի պատասխան է ներկայացրել, որով հայտնել է, որ հայցվոր Սասան Գասպարյանը հայցադիմում ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ:
Նշել է, որ 2016թ. մարտ ամսվա վերջերում իր փաստացի տիրապետման տակ գտնվող ԳԱԶ 3110 մակնիշի մեքենայի շարժիչի վթարման պատճառով դիմել է սույն գործով պատասխանող Արտակ Վլադիկի Խաչատրյանին վերանորոգելու համար: Հայտնաբերելով այն հանգամանքը, որ շարժիչը վերանորոգելու հետ կապված գործընթացը պահեստամասի բացակայության պատճառով երկու շաբաթից ավելին ժամանակ է պահանջում և միաժամանակ Արտակ Խաչատրյանից ստանալով առաջարկ ձեռք բերել իրենից, ինքը, ստուգելով վերջինիս մոտ մեքենայի օրինական գտնվելու հիմքը, ընդունել է առաջարկը:
Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված ժամանակահատվածում ինքը՝ որպես ՀՀ ՊՆ հետ համագործակցող կառույցի ղեկավար զբաղված էր ԼՂՀ-ում գտնվող կամավորական ջոկատների կարգավորմամբ, ինչպես նաև նրանց գործունեության իրականացման կարգավորմամբ և առանց տրանսպորտային միջոցի իր մոտ ծագում էին իր պարտականությունների կատարման անհնարին պայմաններ ինքը նման առաջարկից չէր կարող հրաժարվել: Նշել է, որ Արտակ Խաչատրյանը նման առաջարկը կատարել է վերը նշված իրավիճակից ելնելով՝ ցանկանալով օգտակար լինել:
Արտակ Խաչատրյանը ներկայացրել է իրեն ավտոմեքենայի տարաժամկետումով առուվաճառքի պայմանագիրը: Համաձայն պայմանագրի 2.1 կետի՝ Արտակ Խաչատրյանը վերջին վճարումը պետք է կատարեր 2016թ. հոկտեմբերի 5-ին: Ելնելով պայմանագրում նշված վճարման ժամկետից, իրենք պայմանավորվել են BMW5251 մակնիշի ավտոմեքենայի առք ու վաճառքի գործարքը կատարել 2016 թվականի հոկտեմբեր ամսին: Արտակ Խաչատրյանն իրենց հայտնել է, որ իր պայմանագրով ստանձնած պարտականությունները կատարել է 650 000/ վեց հարյուր հիսուն հազար /ՀՀ դրամի չափով, իսկ մնացորդ 350000 /երեք հարյուր հիսուն հազար ՀՀ դրամը մինչև պայմանագրի ավարտը Սասուն Գասպարյանին կվճարի հոկտեմբեր ամսին: Միաժամանակ նա հայտնել է, որ մեքենան գտնվում է ոչ լիարժեք սարքին վիճակում, սակայն այն կարելի է շահագործելու ընթացքում վերականգնել:
Պայմանավորվածությունը ձեռք բերելուց հետո, թեթև տեխնիկական խնդիրները կարգավորելուն պես մեկնել է ԼՂՀ:
Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավտոմեքենայի սեփականատիրոջ հետ հայցվոր Սասուն Գասպարյանին զանգահարելը կարող է Արտակ Խաչատրյանի համար խոչընդոտներ ստեղծել, ինքը չի զանգահարել ճշտելու նպատակով:
2016թ. հունիսի վերջում իրեն է զանգահարել հայցվոր Սասուն Գասպարյանի որդի Գառնիկ Գասպարյանը և հայտնել, որ փաստացի մեքենան ինքն է տիրապետում և ցանկանում է իր հետ հանդիպել: Քանի որ գտնվում էր ԼՂՀ-ում պատասխանողը նրան հայտնել է, որ վերադառնալուն պես անպայման կհանդիպի: Հանդիպման ընթացքում Գառնիկ Գասպարյանն հայտնել է, որ Արտակ Խաչատրյանն իրեն վճարել է 650 000 հազար ՀՀ դրամ, իսկ մնացորդ գումարը ինչ-ինչ պատճառով խուսափում է կատարել: Հանդիպման ընթացքում ինքը հայտնել է, որ մեքենայի վրա կատարել է և շարունակում է կատարել տեխնիկական թերությունների վերացում, որոնց չափն արդեն հուլիս ամսվա դրությամբ կազմում է 400 000/չորս հարյուր հազար/ՀՀ դրամ: Միաժամանակ նրան հայտնել է իր և Արտակ Խաչատրյանի միջև ձեռք բերված պայմանավորվածության մասին, որը ինքը մինչև 2016թ. հոկտեմբեր ամսվա վերջ չի կարող խախտել: Միաժամանակ Գառնիկ Խաչատրյանին հայտնել է, որ իրավունք չունի Արտակ Խաչատրյանին պարտադրել Սասուն Գասպարյանին վճարել մնացորդ գումարը:
Հայտնել է, որ 2016 թվականի հոկտեմբեր ամսվա վերջ ինքը զանգահարել է Գառնիկ Գասպարյանին և առաջարկել հանդիպել Արտակ Խաչատրյանին, որին նա հայտնել է, թե չի ցանկանում վերջինիս հետ հանդիպել: Առաջացած

խնդրի կարգավորման նպատակով մեկնել է Արտաշատի շրջան Շահումյան գյուղ՝ Արտակ Խաչատրյանի հետ հանդիպելու նպատակով: Վերջինին պահանջ է ներկայացրել կատարել անհրաժեշտ ձևակերպումներ, ելնելելով բանավոր պայմանավորվածության պայմաններից: Իր ներկայությամբ Արտակ Խաչատրյանը, վատառողջ վիճակում, զանգահարել է Գառնիկ Գասպարյանին, ներկայացրել գումարի վճարելու ուշացման պատճառները և միաժամանակ առաջարկել պարտքից նվազեցնել ևս 100000 /հարյուր հազար /<< դրամ/, Գառնիկ Գասպարյանը հրաժարվել է քննարկել և պահանջել ամբողջությամբ մարել գումարը, նոր կատարել անհրաժեշտ ձևակերպումները:
Վերադառնալուն պես ինքը կրկին հրավիրել է Գառնիկ Գասպարյանին, հայտնել, որ Արտակ Խաչատրյանը ծեծի ենթարկվելու պատճառով գտնվում է ծանր վիճակում և անկախ այդ հանգամանքից պատրաստ է վճարել 100000 << դրամ, իսկ մնացորդ մասը մինչև դեկտեմբեր ամսվա վերջ: Միաժամանակ հայտնել է, որ եթե պայմանագրի կողմերը մինչև հունվար ամսվա վերջ չկատարեն իրենց պարտավորությունները, ապա ինքը ստիպված կլինի դիմելու դատարան՝ վեճը կարգավորելու նպատակով: Յուրաքանչյուր պետության տնտեսական կյանքի հիմքը բնականոն գույքային (քաղաքացիական)շրջանառությունն է, որը կարելի է կարճ սահմանել որպես, պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ ձևով: Քաղաքացիական օրենսդրության տեսանկյունից իրավական հետևանքների հանգեցնող գործողությունները իրենցից ներկայացնում են տարբեր բնույթի գործարքներ:
Պատասխանողը վկայակոչել է << քաղաքացիական օրենսգրքի 289, 294 հոդվածները:
Նշել է, որ իր և Արտակ Խաչատրյանի միջև 2016թ. մայիսին կնքվել բանավոր գործարք՝ ձեռք բերվել պայմանավորվածություն BMW525 / մակնիշի ավտոմեքենայի առք ու վաճառքի վերաբերյալ/: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արտակ Խաչատրյանը վնասվածք ստանալու պատճառով չի կարողացել կատարել իր և հայցվոր Սասուն Գասպարյանի միջև կնքված ավտոմեքենայի տարաժամկետումով առուվաճառքի պայմանագրի 1/3 մասը՝ 350000 << դրամ չի կարողացել միանվագ վճարել առողջական խնդիրների պատճառով, ինչպես նաև այն հանգամանքը, որ ավտոմեքենան արդյունքում պետք է անվանափոխվեր "ԳԼՈՍՍԱ " իրավապաշտպան կազմակերպության անունով և միաժամանակ Սասուն Գասպարյանի պահանջով 17.02.2016թ. կնքված պայմանագիրը ենթարկվել է էական փոփոխության և 2016թ. օգոստոս ամսին կողմերով քննարկել են փոփոխություն կատարելու փաստը: Սասուն Գասպարյանը համաձայնվել է կատարել ավտոմեքենայի գրանցումը "ԳԼՈՍՍԱ "ԻՀԿ անունով՝ Արտակ Խաչատրյանի կողմից 350000 << դրամ մինչև 2016թ. հոկտեմբեր ամսվա վերջ առաջինին վճարելու պայմանով: Քանի որ Արտակ Խաչատրյանն իրենից անկախ պատճառներով չի կարողացել միանվագ կատարել վճարում մնացորդ գումարի մասով և իր ներկայությամբ առաջարկել է Սասուն Գասպարյանին մնացորդ գումարը տարաժամկետել ամսական 100000 << դրամ վճարել, պատասխանողը ստիպված կողմերին սկսել է ներկայացնել իր պահանջները: Վերջինս չի համաձայնվել և պահանջել է գումարը վճարել ամբողջությամբ:
Պատասխանողը վկայակոչելով << քաղաքացիական օրենսգրքի 467 հոդվածը՝ նշել է, որ մինչև օրս Սասուն Գասպարյանը հրաժարվում է թե Արտակ Խաչատրյանից և թե իր միջոցով իրեն մաս - մաս գումար փոխանցելուց, դրանով ստեղծելով խոչընդոտ եռակողմ բանավոր ձեռքբերված պայմանավորվածության, ինչպես նաև մեքենայի ձևակերպման համար: Սասուն Գասպարյանը տեղյակ էր, որ պատասխանողի կողմից ավտոմեքենայի թե պահպանման թե վերանորոգման ծախսեր կատարելու մասին, ողջունել և պատրաստակամություն հայտնել պահեստամասերի էժան հայթայթելու վերաբերյալ:
Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի պահանջներից դատարանին՝ խնդրում է հայցն ամբողջությամբ մերժել, Սասուն Գասպարյանին պարտավորեցնել կատարել բանավոր ձեռք բերված պայմանավորվածությունը՝ »կատարել ավտոմեքենայի անվանափոխումը "ԳԼՈՍՍԱ" ԻՀԿ անունով և ընդունել Արտակ Խաչատրյանի կողմից վճարվող մնացորդ 350000 << դրամը: Դատական նիստով Աշոտ Համբարձումյանը հայտնեց, որ ինքը պարտավորվում է վճարել գումարը:

4.Պատասխանող Արտակ Խաչատրյանի դիրքորոշումը
Պատասխանողը հայցադիմումի պատասխան է ներկայացրել, որով հայտնել է, որ 2016թ. փետրվարի 17-ն իր և հայցվոր Սասուն Գասպարյանի միջև կնքվել է առուծախի տարաժամկետման պայմանագիր BMW5251 մակնիշի ավտոմեքենան օտարելու վերաբերյալ: Քանի որ մեքենան ձևակերպված է Սասուն Գասպարյանի անունով *պայմանագրի կողմ է հանդիսացել Սասուն Գասպարյանը, սակայն ավտոմեքենան փաստացի տիրապետել է Գառնիկ* Գասպարյանը և նրա հետ են եղել բոլոր բանակցություններն ու վճարումները: Նշել է, որ ինքը պայմանագրի պահանջները բարեխիղճ կատարել է մինչև 2016թ.-ի հուլիս ամիսը ներառյալ՝ վճարելով 650000 /վեց հարյուր հիսուն հազար /<< դրամ: Ավտոմեքենան նույն թվականի մայիս ամսին վաճառել է Աշոտ Համբարձումյանին հետձևակերպման պայմանով քանի որ, ինքը պետք է Սասուն Գասպարյանին վճարեր 350000 /երեք հարյուր հիսուն հազար/ << դրամ: Առողջական խնդիրների պատճառով չի կարողացել վճարել մնացած գումարը, որի մասին տեղեկացրել է Սասուն Գասպարյանին, բայց դա հիմք չի հանդիսացել, որ հրաժարվի գումարը վճարելուց և պատրաստակամություն է հայտնել վճարել գումարը ամսական 50-100 հազարական << դրամի չափով, բայց վերջինս հրաժարվել է և պահանջել վճարել ամբողջական գումարը, դրանով խոչընդոտ է առաջացրել իր և նրա միջև գրավոր կնքված պայմանագրի պահանջների, ինչպես նաև էականորեն փոփոխված պայմանավորվածության կատարման

համար: Նույն թվականի օգոստոս ամսին ինքը Գառնիկ Գասպարյանի և Աշոտ Համբարձումյանի հետ համաձայնության է եկել՝ ավտոմեքենան անվանափոխել Աշոտ Համբարձումյանի անունով ամբողջական գումարը վճարելուց հետո՝ հոկտեմբեր ամսին: Համաձայն պայմանավորվածության հոկտեմբեր ամսին Աշոտ Համբարձումյանը պահանջել է ավտոմեքենան ձևակերպել իր անունով, բայց Ա.Խաչատրյանը դեռևս չէր վճարել մնացած 350000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամը, ի վիճակի էր վճարել միայն 100000 /հարյուր հազար/ ՀՀ դրամը, բայց Գառնիկ Գասպարյանը հրաժարվել է և գումարից, և հանդիպելուց, և պահանջել է ամբողջությամբ մարել գումարը: Նշել է, որ Աշոտ Համբարձումյանն իրենից պահանջել է կատարել պայմանագրի պահանջները և վճարել գումարը, որպեսզի Սասուն Գասպարյանը ավտոմեքենան անվանափոխի իր անունով և Գառնիկ Գասպարյանից պահանջել է ավտոմեքենան անվանափոխել իր անունով մինչև տարվա վերջ, հակառակ դեպքում իր պահանջները երկուսիս կողմից չկատարելու դեպքում դիմելու է դատարան:
Պատասխանողը նշել է, որ Սասուն Գասպարյանը երբեք իրենից չի պահանջել վերադարձնել մեքենան, նա միայն պահանջել է վճարել ամբողջական գումարը, որից ինքը չի հրաժարվել և պատրաստ է թեկուզ կետանցով, բայց վճարել մնացորդ 350000/ երեք հարյուր հիսուն/ ՀՀ դրամը ամսական 50-100 հազար ՀՀ դրամ վճարելու պայմանով:
Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի պահանջներից դատարանին խնդրում է հայցն ամբողջությամբ մերժել:
Պատասխանող Արտակ Խաչատրյանը դատական նիստով հայտնեց, որ պատրաստ է ամեն ամիս վճարել 65 000 ՀՀ դրամ:
II
1. Գործի փաստերը
- Համաձայն 26.11.2008թ. տրված թիվ SJ 00169 տրանսպորտային միջոցի գրանցման վկայագրի՝ ԲՄՎ525 I մակնիշի ավտոմեքենան, սեփականության իրավունքով գրանցված է Սասուն Գասպարյանի անվամբ:
- Համաձայն 17.02.2016թ. Նոր Նորք նոտարական տարածքի նոտար Օսան Հակոբյանի կողմից վավերացրած ավտոմեքենայի տարաժամկետումով առուվաճառքի պայմանագրի՝ Սասուն գառնիկի Գասպարյանը, այսուհետ՝ «վաճառող» և Արտակ Վլադիկի Խաչատրյանը, այսուհետ՝ «գնորդ» կնքելով սույն պայմանագիրը հետևյալի մասին.
պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «ՎԱՃԱՌՈՂԸ» «ԳՆՈՐԴԻՆ» վաճառում է հետևյալ ավտոմեքենան, որպես սեփականություն՝ Մակնիշը՝ ԲՄՎ 525 1, Արտադրության տարեթիվ 1990թ., Շարժիչ թիվ 256K122026898, նույնացման համար թիվ WBAHC11060BC73284, թափք թիվ -, Հենասարք թիվ-,
Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում է «ՎԱՃԱՌՈՂԻՆ», ինչը հաստատվում է ՀՀ Կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, ճանապարհային ոստիկանություն ե ծառայության Երևանի ՀՔԲ /264/ ստորաբաժանման կողմից 17.02.2016թ. տրված տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 01 BA 834952- վկայականով:
Պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ վաճառքի գինը՝ 990000 / ինը հարյուր ինենսուն հազար/ ՀՀ դրամ: Նշված գումարից գնորդ՝ Արտակ Վլադիկի Խաչատրյանը Սասուն գառնիկի Գասպարյանին պայմանագրի կնքման պահին վճարում է 74250 /յոթանասունչորս հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամը երկու հազար տասնվեց թվականի մարտի 5-ը ժամկետում պարտավորվում է վճարել 173250 /հարյուր յոթանասուներեք հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամը, 742500 /յոթ հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամը պարտավորվում է վճարել մինչև երկու հազար տասնվեց թվականի սեպտեմբերի հինգը վճարելով յուրաքանչյուր ամիս 100 000 / հարյուր հազար / ՀՀ դրամ, իսկ մնացած 142500 / հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր / ՀՀ դրամը՝» մինչև երկու հազար տասնվեց թվականի հոկտեմբերի 5-ին:
Պայմանագրի 2.2. կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրի 1-ին կետում նշված ավտոմեքենան մեկ օրվա ընթացքում հանձնել գնորդին:
2. Դատարանի վերլուծությունը և կիրառելի օրենսդրությունը
Լսելով կողմերին, դատարանը, գնահատելով գործի դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, եկավ հետևյալ եզրահանգման.
Հայցվորը, դիմելով դատարան, այնուհետև ավելացնելով հայցապահանջը, խնդրել է. 18.02.2016թ. իր և Արտակ Խաչատրյանի միջև կնքված ավտոմեքենայի տարաժամկետ առուծախի պայմանագիրն անվավեր ճանաչել և իր «ԲՄՎ 525 i» մակնիշի 1990 թվականի արտադրության 60BC73284, շարժիչ՝ թիվ 256 256K122026898, նույնացման համարը՝ WBAHC11060BC73284 ավտոմեքենան հետ վերադարձնել:
Դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149.8 հոդվածի դրույթներով, բաշխել է ապացուցման բեռ, մասնավորապես.
հայցվորը պետք է ապացուցեր, որ բացի 74 000 ՀՀ դրամից այլ գումար չի ստացել, որ իր վրա դրված պայմանագրով պարտականությունը կատարել է, սակայն Արտակ Խաչատրյանը չի կատարել որևէ պարտականություն, պետք է ապացուցեր նաև, որ գործարքն անվավեր ճանաչելու հիմքերն առկա են և նրան պետք է վերադարձվի մեքենան:

Աշոտ Համբարձումյանը և Արտակ Խաչատրյանը կրում են հայցադիմումի պատասխանով վկայակոչած փաստարկներն ապացուցելու պարտականությունը, այն է, որ պարտքից մնացել է 350 000 << դրամ և հայցվորի հետ ունեցել է այլ պայմանավորվածություն, քան նշված է պայմանագրով:
Գործով յուրաքանչյուր կողմ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:
Անդրադառնալով հայցվորի առաջին պահանջին՝ դատարանը արձանագրում է հետևյալը.
Համաձայն 26.11.2008թ. տրված թիվ SJ 00169 տրանսպորտային միջոցի գրանցման վկայագրի՝ ԲՄՎ525 I մակնիշի ավտոմեքենան, սեփականության իրավունքով գրանցված է Սասուն Գասպարյանի անվամբ:
Համաձայն 17.02.2016թ. Նոր Նորք նոտարական տարածքի նոտար Օսան Հակոբյանի կողմից վավերացրած ավտոմեքենայի տարաժամկետումով առուվաճառքի պայմանագրի՝ Սասուն գառնիկի Գասպարյանը, այսուհետ՝ «վաճառող» և Արտակ Վլադիկի Խաչատրյանը, այսուհետ՝ «գնորդ» կնքելով սույն պայմանագիրը հետևյալի մասին. պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «ՎԱՃԱՌՈՂԸ» «ԳՆՈՐԴԻՆ» վաճառում է հետևյալ ավտոմեքենան, որպես սեփականություն՝ Մակնիշը՝ ԲՄՎ 525 1, Արտադրության տարեթիվ 1990թ., Շարժիչ թիվ 256K122026898, նույնացման համար թիվ WBAHC11060BC73284, թափք թիվ -, Հենասարք թիվ-,
Պայմանագրի 1.2 կետի համաձյան՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում է «ՎԱՃԱՌՈՂԻՆ», ինչը հաստատվում է << Կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, ճանապարհային ոստիկանություն ե ծառայության Երևանի ՀՔԲ /264/ ստորաբաժանման կողմից 17.02.2016թ. տրված տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 01 BA 834952- վկայականով:
Պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ վաճառքի գինը՝ 990000 / ինը հարյուր իննսուն հազար/ << դրամ: Նշված գումարից գնորդ՝ Արտակ Վլադիկի Խաչատրյանը Սասուն գառնիկի Գասպարյանին պայմանագրի կնքման պահին վճարում է 74250 /յոթանասունչորս հազար երկու հարյուր հիսուն/ << դրամը երկու հազար տասնվեց թվականի մարտի 5-ը ժամկետում պարտավորվում է վճարել 173250 /հարյուր յոթանասուներեք հազար երկու հարյուր հիսուն/ << դրամը, 742500 /յոթ հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր/ << դրամը պարտավորվում է վճարել մինչև երկու հազար տասնվեց թվականի սեպտեմբերի հինգը վճարելով յուրաքանչյուր ամիս 100 000 / հարյուր հազար / << դրամ, իսկ մնացած 142500 / հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր / << դրամը՝» մինչև երկու հազար տասնվեց թվականի հոկտեմբերի 5-ին:
Պայմանագրի 2.2. կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրի 1-ին կետում նշված ավտոմեքենան մեկ օրվա ընթացքում հանձնել գնորդին:
Համաձայն << քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:
<< քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ գործարքն անվավեր է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):
Վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջը կարող են ներկայացնել սույն օրենսգրքում նշված անձինք:
Վերոգրյալ իրավանորմից հետևում է, որ գործարքն անձանց՝ կամաարտահայտության միջոցով կատարված գործողություն է՝ սահմանել, փոփոխել կամ դադարեցնել քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ, այսինքն՝ գործարքի հիմքում դրված է գործարք կնքող կողմերի ազատ կամքի դրսևորումը:
Համաձայն << քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի՝ գործարքն անվավեր է՝ սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք): Վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջը կարող են ներկայացնել սույն օրենսգրքում նշված անձինք: Առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ: Դատարանն իրավունք ունի այդպիսի հետևանքներ կիրառել սեփական նախաձեռնությամբ:
Սույն իրավանորմից բխում է, որ, ըստ էության, անվավեր գործարքները բաժանված են երկու խմբի՝ «առոչինչ գործարքներ» և «վիճահարույց գործարքներ»:
Առոչինչ գործարքի հիմնական առանձնահատկությունն այն է, որ առոչինչ գործարքի դեպքում այն անվավեր է ինքնըստինքյան, անկախ այն բանից, թե կողմերը պահանջում են այդ գործարքն անվավեր ճանաչել, թե ոչ, իսկ վիճահարույց գործարքն անվավեր կարող է ճանաչվել, եթե այդպիսի պահանջ է ներկայացվել դատարան՝ դրա իրավունքն ունեցող անձի կողմից:
<< քաղաքացիական օրենսգրքի 294-րդ հոդվածի համաձայն գործարքները կնքվում են բանավոր կամ գրավոր ձևով:
Տվյալ պարագայում, հայցվորի կողմից չի ներկայացվել որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց, այն մասին, որ 17.02.2016 թվականին տարաժամկետումով կնքված առուվաճառքի պայմանագիրը կնքվել է օրենքի խախտմամբ, կամ կնքված գործարքն իրենից ներկայացնում է վիճահարույց գործարք:
Ասվածից հետևում է, որ 17.02.2016 թվականին տարաժամկետումով կնքված առուվաճառքի պայմանագիրն

անվավեր ճանաչելու հիմքեր չեն ներկայացվել դատարանին, ուստի այդ մասով հայցը ենթակա է մերժման:
Անդրադառնալով հայցվորի երկրորդ պահանջին՝ «ԲՄՎ 525 i» մակնիշի 1990 թվականի արտադրության 60BC73284, շարժիչ՝ թիվ 256 256K122026898, նույնացման համարը՝ WBAHC11060BC73284 ավտոմեքենան հետ վերադարձնելուն, ապա այս մասով դատարանն արձանագրում է հետևյալ.
Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470-րդ հոդվածի 1-ին մասի՝ առուվաճառքի պայմանագրով կողմերից մեկը (վաճառողը) պարտավորվում է մյուս կողմին (գնորդին) որպես սեփականություն հանձնել (գույք) ապրանք, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և դրա համար վճարել որոշակի գումար (գինը):
Համաձայն նույն օրենսգրքի 501-րդ հոդվածի 1-ին մասի՝ գնորդը պարտավոր է ապրանքի համար վճարել առուվաճառքի պայմանագրով նախատեսված գինը, իսկ եթե այն նախատեսված չէ պայմանագրով կամ չի կարող որոշվել դրա պայմաններից ելնելով, ապա՝ սույն օրենսգրքի 440 հոդվածի 3-րդ կետին համապատասխան որոշվող գինը, ինչպես նաև իր հաշվին կատարել այնպիսի գործողություններ, որոնք, օրենքին, այլ իրավական ակտերին, պայմանագրին կամ սովորաբար ներկայացվող պահանջներին համապատասխան, անհրաժեշտ են վճարելու համար:
Տվյալ պարագայում, սույն գործով վիճարկվող պայմանագրով նախատեսվել է, որ վաճառքի գինը՝ 990000 / ինը հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ: Նշված գումարից գնորդ՝ Արտակ Վլադիկի Խաչատրյանը Սասուն Գառնիկի Գասպարյանին պայմանագրի կնքման պահին վճարում է 74250 /յոթանասունչորս հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամը երկու հազար տասնվեց թվականի մարտի 5-ը ժամկետում պարտավորվում է վճարել 173250 /հարյուր յոթանասուներեք հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամը, 742500 /յոթ հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամը պարտավորվում է վճարել մինչև երկու հազար տասնվեց թվականի սեպտեմբերի հինգը վճարելով յուրաքանչյուր ամիս 100 000 / հարյուր հազար / ՀՀ դրամ, իսկ մնացած 142500 / հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր / ՀՀ դրամը՝ մինչև երկու հազար տասնվեց թվականի հոկտեմբերի 5-ին:
Դատարանն արձանագրում է, որ սույն գործով ձեռք բերված ապացույցներով, հաստատվել է, որ պատասխանող Արտակ Խաչատրյանի կողմից պատշաճ չի կատարվել 17.02.2016 թվականին կնքված տարաժամկետումով առուվաճառքի պայմանագրի դրույթները, այն է՝ Ա.Խաչատրյանը պայմանագրով սահմանված ժամկետներում հայցվոր Սասուն Գասպարյանին չի վճարել ավտոմեքենայի գինը:
Բացի այդ, դատարանն արձանագրում է, որ Արտակ Խաչատրյանը, դեռևս չկատարելով 17.02.2016 թվականին կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ավտոմեքենան վաճառել է Աշոտ Համբարձումյանին, որպիսի փաստը հաստատել են կողմերը:
Միաժամանակ դատարանը նաև արձանագրում է, որ Աշոտ Համբարձումյանը դատաքննության ընթացքում պատրաստակամություն է ստանձնել անձամբ վճարել Սասուն Գասպարյանին Աշոտ Համբարձումյանի կողմից չվճարված առուվաճառքի գինը, որը սակայն չի կատարել:
Համաձայն նույն օրենսգրքի 505-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության՝ ապրանքի ապառիկ վաճառքի պայմանագրով կարող է նախատեսվել ապրանքի համար տարաժամկետ վճարելու՝ գնորդի իրավունքը, իսկ համաձյան նույն հոդվածի 2-րդ մասի՝ տարաժամկետ վճարելու պայմանով ապրանքի ապառիկ վաճառքի պայմանագրի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 504 հոդվածի 2-6-րդ կետերով նախատեսված կանոնները:
Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածի 4-րդ մասի՝ այն դեպքում, երբ ապրանք ստացած գնորդն առուվաճառքի պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարում դրա համար, վաճառողն իրավունք ունի պահանջել վճարելու հանձնված ապրանքի համար կամ վերադարձնելու չվճարված ապրանքը:
Տվյալ պարագայում, սույն գործով հայցվորը պահանջել է պատասխանողներից հետ վերադարձնել 17.02.2016 թվականին կնքված պայմանագրի առարկա հանդիսացող ավտոմեքենան:
Համաձայն 26.11.2008թ. տրված թիվ SJ 00169 տրանսպորտային միջոցի գրանցման վկայագրի՝ ԲՄՎ525 I մակնիշի ավտոմեքենան, սեփականության իրավունքով գրանցված է Սասուն Գասպարյանի անվամբ:
Դատարանն արձանագրում է, որ պատասխանողները, ներկայանալով դատական նիստերին, ընդունել են, որ 17.02.2016 թվականին կնքված տարաժամկետումով առուվաճառքի պայմանագրի առարկա հանդիսացող ավտոմեքենան Արտակ Խաչատրյանը վաճառել է Աշոտ Համբարձումյանին, միաժամանակ պատրաստակամություն են հայտնել մաս-մաս վճարել հայցվորին պարտք մնացած գումարը, սակայն որևէ գումար, այդպես էլ հայցվորին, չի վճարվել:
Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 349-րդ հոդվածի՝ պարտատերն իրավունք ունի չընդունել պարտավորության մաս առ մաս կատարումը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով, պարտավորության պայմաններով և չի բխում գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:
Հաստատված համարելով, որ ԲՄՎ525 I մակնիշի ավտոմեքենան, սեփականության իրավունքով գրանցված է Սասուն Գասպարյանի անվամբ և որ վերջինս այն վաճառել է Արտակ Խաչատրյանին, իսկ նա էլ իր հերթին այն վերավաճառել է Աշոտ Համբարձումյանին, միաժամանակ հաստատված դիտելով այն հանգամանքը, որ ավտոմեքենան գտնվում է Աշոտ Համբարձումյանի տիրապետության տակ, դատարանն օրինական է դիտում հայցվորի պահանջը՝ այն վերադարձնելու մասին, քանի որ ինչպես վերն արդեն նշվեց, պատասխանող Արտակ

Խաչատրյանը պայմանագրով սահմանված գինը հայցվորին չի վճարել, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթների համաձայն՝ հայցվորն իրավունք ունի պահանջել վերադարձնելու չվճարված ապրանքը, այն է՝ «ԲՄՎ 525 i» մակնիշի 1990 թվականի արտադրության 60BC73284, շարժիչ՝ թիվ 256 256K122026898, նույնացման համարը՝ WBAHC11060BC73284 ավտոմեքենան:
Այսպիսով, դատարանը գտնում է, որ հայցվորի պահանջը ենթակա է բավարարման մասնակի և «ԲՄՎ 525 i» մակնիշի 1990 թվականի արտադրության 60BC73284, շարժիչ՝ թիվ 256 256K122026898, նույնացման համարը՝ WBAHC11060BC73284 ավտոմեքենան պետք է վերադարձվի հայցվոր Սասուն Գասպարյանին:
Ինչ վերաբերվում է հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքին, ապա դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 68-րդ և 73-րդ հոդվածների դրույթներով, գտնում է, որ պատասխանողներ Աշոտ Համբարձումյանից և Արտակ Խաչատրյանից համապարտությամբ հօգուտ Սասուն Գասպարյանի ենթակա է բռնագանձման 4 000 ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրք գումար, քանի որ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:
Ելնելով վերը շարադրվածներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 հոդվածներով դատարանը,

ՎՃՌԵՑ

Հայցվոր Սասուն Գասպարյանի հայցը բավարարել մասնակի.
Պարտավորեցնել Աշոտ Համբարձումյանին և Արտակ Խաչատրյանին «ԲՄՎ 525 i» մակնիշի 1990 թվականի արտադրության 60BC73284, շարժիչ՝ թիվ 256 256K122026898, նույնացման համարը՝ WBAHC11060BC73284 ավտոմեքենան վերադարձնել հայցվոր Սասուն Գասպարյանին:
Մնացած մասով հայցը մերժել:
Պատասխանողներ Աշոտ Համբարձումյանից և Արտակ Խաչատրյանից համապարտությամբ հօգուտ Սասուն Գասպարյանի բռնագանձել 4 000 ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրք գումար,
Դատական ծախսերի հարցը մնացած մասով համարել լուծված:
Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:
Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ Զ.ՆԱԽՇՔԱՐՅԱՆ